ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2026թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 2896-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 8-ի «Երևանի երիտասարդական նվագախումբ» հիմնադրամ հիմնադրելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 2896-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 2896-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի երիտասարդական նվագախումբ» հիմնադրամի ստեղծումը պայմանավորված է Երևան համայնքում դասական երաժշտարվեստի զարգացման, տաղանդավոր պատանի և երիտասարդ երաժիշտների բացահայտման և մասնագիտական առաջխաղացման, ինչպես նաև մայրաքաղաքի մշակութային կյանքի ակտիվացման և միջազգային մշակութային համագործակցության ընդլայնման անհրաժեշտությամբ:

Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակն է ձևավորել և զարգացնել երիտասարդ երաժիշտների մասնագիտական ստեղծագործական միջավայր, ապահովել նրանց մասնակցությունը համերգային, կրթական և միջազգային մշակութային ծրագրերին, նպաստել երիտասարդական նվագախմբային կատարողական արվեստի զարգացմանը և հայկական երաժշտական մշակույթի միջազգային ճանաչելիության բարձրացմանը:

Հիմնադրամը հնարավորություն կտա մեկ հարթակում համախմբել երաժշտական և արվեստի դպրոցների, երաժշտական ուսումնական այլ հաստատությունների շնորհալի սաներին և ուսանողներին, ստեղծել նրանց շարունակական մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և ստեղծագործական համագործակցության համար անհրաժեշտ պայմաններ:

Հիմնադրամի շահառուներ են հանդիսանալու մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ երաժշտական և արվեստի դպրոցները, ինչպես նաև նրանց սաները և ուսանողները:

Հիմնադրամի գործունեությունը կնպաստի նաև միջազգային համերգային ծրագրերի, փառատոների, վարպետության դասերի, կրթական նախագծերի և մշակութային փոխանակման ծրագրերի իրականացմանը, ինչի արդյունքում կընդլայնվեն Երևանի և Հայաստանի մշակութային կապերը միջազգային

գործընկերների հետ և կբարձրանա մայրաքաղաքի մշակութային հեղինակությունը:

Հիմնադրամի ստեղծումը համապատասխանում է Երևան համայնքի մշակութային քաղաքականության առաջնահերթություններին և ուղղված է մշակութային կրթության, երիտասարդական քաղաքականության և մշակութային կյանքի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Որոշման նախագծի ընդունմամբ կստեղծվի «Երևանի երիտասարդական նվագախումբ» հիմնադրամը, որի հիմնադիրը կլինի Երևան համայնքը՝ ի դեմս Երևանի քաղաքապետի՝ որպես լիազորված մարմնի:

Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանի կողմից հետևողական քայլեր են իրականացվել մայրաքաղաքի երաժշտական և արվեստի կրթության զարգացման, մշակութային կյանքի ակտիվացման և երիտասարդ ստեղծագործողների համար նոր հնարավորությունների ստեղծման ուղղությամբ: Երևանի համայնքապատկան գործող երաժշտական և արվեստի դպրոցներում սովորում են շուրջ 10000 աշակերտներ, որոնց համար կարևոր է նոր մասնագիտական հարթակների ձևավորման գործընթացի շարունակականության ապահովումը:

Երաժշտական կրթության ոլորտում արձանագրված հաջողությունները, ինչպես նաև երիտասարդ շնորհալի երաժիշտների համար մասնագիտական զարգացման, նվագախմբային կատարողականության փորձի ձեռքբերման և միջազգային հարթակներում ներկայանալու նոր հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությունը հիմք են հանդիսացել «Երևանի երիտասարդական նվագախումբ» նախաձեռնության ձևավորման համար:

Երևանի երիտասարդական նվագախումբը գործում է 2023 թվականից և ստեղծման օրվանից դարձել է Երևանի մշակութային կյանքի նշանակալի մասնակիցներից մեկը՝ հանդես գալով բազմաթիվ համերգային ծրագրերով, մասնակցելով քաղաքային, հանրապետական և միջազգային մշակութային միջոցառումներին: Նվագախումբը հաջողությամբ ներկայացրել է Հայաստանը արտերկրում՝ Բեռլինում, Մոսկվայում, Թբիլիսիում և Բեյրութում՝ արժանանալով մասնագիտական շրջանակների և հանդիսատեսի բարձր գնահատականին,

նպաստելով հայկական կատարողական արվեստի հանրահռչակմանը և միջազգային մշակութային կապերի ամրապնդմանը: Նվագախմբի գործունեության ընթացքում ձևավորված ստեղծագործական ներուժը, արձանագրված հաջողությունները, միջազգային համագործակցության ընդլայնման հեռանկարները և ծրագրերի շարունակական զարգացման անհրաժեշտությունը պայմանավորում են դրա գործունեության համար ավելի կայուն կազմակերպահիրավական հիմքերի ստեղծումը՝ հիմնադրամի ձևաչափով:

Հիմնադրամի ստեղծումը հնարավորություն կտա նաև ապահովել նվագախմբի երկարաժամկետ և համակարգված զարգացումը, ներգրավել լրացուցիչ ֆինանսական և մասնագիտական ռեսուրսներ, ընդլայնել միջազգային համագործակցությունը, իրականացնել կրթական, համերգային և մշակութային նոր ծրագրեր, ինչպես նաև առավել արդյունավետ կերպով նպաստել երիտասարդ երաժիշտների մասնագիտական կայացմանը:

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-մասը Երևանի քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 8-ի «Երևանի երիտասարդական նվագախումբ» հիմնադրամ հիմնադրելու եվ հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» հ. 2896-Ա որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ